ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Բ. ՄԷՌԻ, Թիւ 502 — 30 HUITIÈME ANNÉE ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍ 23 / 5 ՕԳՈՍՏՈՍ 1908

ՀԱՍՑԷ
Rédaction du Journal arménien
ARCHALOUYCE
(EGYPTE) LE CAIRE

Գլխաւոր - Խմբագրութեան
ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ

Չի հրատարակուած ձեռագիրները եւ չե՛ն տրուիր։

Բաժանորդագրութիւնը կանխիկ է, իսկ ծանուցումներ կ'ընդունուին մասնաւոր հատուցմամբ։

Ադեմանդրիոյ Ներկայացուցիչ
Յ. Պ. ՉԱՒԻՐՈՒՆԵԱՆ
Ռաղիպ Բաշա Թ. 67

ԱՐՇԱԼՈՅՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԵՐ

ԵԳԻՊՏՈՍ
Տարեկան դրամ - ողջ 30

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Տարեկան փրանգ 10

Բաժանորդի՞ ՅԱՒԵԼՈՒԱԾ ցիրուս փոխարէն յիշուումէ գրած պիտի բլլան.

Թէ՛ ԱՐՇԱԼՈՅՍԻ եւ թէ՛ ՏՊԱՐԱՆԻՆ վերաբերեալ նիւթական խնդրոց համար պէտք է դիմել Խմբագրութեան հասցէով թերթիս Մասակարարին, որ է՝

ԳԷՈՐԳ ՓԱՓԱԶԵԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրները ուղղակի պատասխանատու են իրենց գրածներուն

ՀԱՏԸ 20 ՓԱՐԱ ՈՂՋ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ

1. – Կազմութիւն. 2. Կազմական գործեր. 3. – Նպատակ. 4 – Արդիւնք. 5 – Ա. Բ. տեղեկագիրներ. 6. – Հակառակորդներ. 7. – Ընկերութեան անցեալը. 8. – Ներկան, 9. – Ապագան 10. – Հ. Բ. Ը. Միութիւնը ընդհանուր գծերով 11. – Կանոնագիր։

Ա.
ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Հաստատութիւն մը՝ որուն կարեւորութիւնը շատ քիչեր ըմբռնած են, եւ որոյ մասին վերապահօտ լռութիւն մը անհրաժեշտ եղած է ժամանակի պահանջումներուն համակերպելու համար, որուն նկատմամբ լրագրական անվերջանալի էջեր կը պատրաստուին ապագային անոր նուիրուելու՝ անոր շուքն ու փայլը յաւերժացնելու համար, այդ հաստատութիւնը՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆՆ է։

Հ. Բ. Ը. Միութեան քանի մը տասնեակ աղգուն տողեր ձօնելու համար, գիտեմ որ Անոր ինծի ծանօթ բոլոր նպատակաւոր հակակիրները ինծի դէմ պիտի ունենամ...։ Հոգս չէ...։ Անցեալ օրեր կարեւոր դիրքի տէր բարեկամ մը, զոր շատ համակրելի գտած եմ, և թերեւս այս ընտրութիւնը ըրած ըլլալուս համար զղջալու պատճառներ չ'պիտի ունենամ բնաւ. ըսաւ ինծի. – բարեկա՛մ. «Ճշմարտութիւնը մերկ է»։ Հասկցնել կուզէր թէ՝ մերկ և ահաւոր կրնամ մնալ։ Ատանք ալ պիտ չեն խրաչեցներ։ Բաւական է որ ես ինքս ճշմարտութիւն խօսած ըլլալու գոհունակութիւնը ունենամ, և իրողութիւնս ո՛ և է պատճառաւ ծանրաբեռնուած չ'զգամ. ասիկայ իմ բոլոր մխիթարութիւնս և վարձատրութիւնս պիտի ըլլայ։

Ահա ինչո՞ւ ես անաչառ ու սանձարձակ պիտի ըլլամ իմ քննադատութիւններուս մէջ, և ինչո՞ւ բիւրաւոր գովեստներու արժանի գտած մէկ հաստատութիւնս, իր քննադատելի կողմերովն ալ – եթէ ունենայ – պիտի համարձակիմ հանրութեան ուշադրութեանը յանձնել անխիտիր։

Հայկական հարստութիւններու տապալումէն յետոյ, իրարու յաջորդող հնդեակ մը դարերուն մէջ, յորում հայութիւնը ճգնաժամային ու սարսափներով պաշարուած կեանք մը ապրեցաւ, վայրկեանէ վայրկեան ահեղորոտ մրրիկներու ենթակայ, այս անակնկալներով յղփուն ժամանակամիջոցին մէջ՝ պատմութիւնը մեզի շատ քիչ բան կը հաղորդէ ձեռնհասութեան սահմաններու մէջ ընկերային բարիքը և օգուտը շօշափող ու միևնոյն ատեն յառաջդիմութեան Ռահվիրայ ըլլալու կոչուած միութիւններու մասին։

Այս վերջին կէս դարուն մէջ, որը «մեր օրերն ալ կրնանք անուանել» Մխիթարեանէն անմիջապէս վերջը կուգայ Հ. Բ. Ընդհ. Միութիւնը, իր խոստմնալից ապագայովը. միայն թէ՝ մենք միահամուռ և արժանապէս գնահատել գիտնանք զայն։

Սոյն ընկերութեան կազմութիւնը բարեպատեհ անակնկալ մը եղաւ պարզապէս, և շատեր որ ինծի պէս կրնան մտածել անոր նկատմամբ՝ առանց աջէն ու ձախէն փչած խորշակներէն սահմռկելու, ապահով պէտք է ըլլան թէ՝ իրենց յոյսերը իրենց յուսացածէն շատ աւելի մեծ յաջողութիւններով պսակուած պիտի գտնեն քիչ առեն։

Զեմ գիտեր ինչո՞ւ խորունկ համակրանքով մը չ'երաբերուիլ կը թելադրուիմ դէպի Միութիւնը, ես որ պարագաներուն բերմամբ՝ տակաւին վճարող բաժանորդ մը արձանագրուած չեմ անոր։

Կարճ պատմութիւն մը թերեւս այս պարագան բացատրէ։

1905 ի երկրորդ եռամսեայն մէջերն էր. մեր աչքերուն առջև և քղանցքներու մօտ շրջանակ բոլորող յայտնի և այլապէս խաբէութիւններ թելադրանք մը եղան 4 – 5 հոգիներու հետ «Ազգային Միութիւն» անունին տակ ուժ մը կազմելուն վրայ մտածելու, կասեցնելու համար առանց յառաջխաղացումը, որ կարի ցնասակար կը գտնէինք և սխալած ալ չէինք...։

Այդ նպատակին համար ծրագրեալ միութեան կնիքը նոյնիսկ յանձնարարուեցաւ Աղէքսանդրիոյ Դ. Նաղարէթեան փորագրատան՝ որ շատ ուշ պատրաստեց։ Իսկ մեր ծրագիրը խանձարուրին մէջ խեղդելու ջանքեր եղան... ուրիշ՞ ալ իմացած էին...։

Այնուհետև իրարու յաջորդող յատկապէս պատրաստուած փորձանքներ պատճառ եղան պահ մը հրապարակէն քաշուիլ... ու երբ հիմայ դարձեալ իմ տեղս դրաւելու կուգամ, ուրախութեամբ և հրճուանքով կը տեսնեմ հաստատուն հիմերու վրայ դրուած, վստահելի ձեռքերու մէջ գրեթէ այն նպատակաւ կազմուած Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը իրեն լայն և գործնական հողի վրայ դրուած ծրագրով, որ իր տեսակին մէջ միակը ըլլալու կոչուած է՝ ազգօգուտ և նախախնամական։

Արդի կացութեան մէջ առաւել քան երբէք օգտակար ըլլալու կոչուած է բարեգործական միութիւնը։ Պէտք չէ՛ երբէք նկատողութենէ վրիպեցնել ասիկայ և ըստ այսմ ընկերութեան նիւթականը զօրացնելու է, որչափ որ կարելի է։

Ժամանակի պահանջները մէկէն ի մէկ փոխուեցան հիմայ։ Տեւականութիւն և նորանոր յաջողութիւններ մաղթենք։

Քանի մը քայլ ևս առած ենք դէպի յառաջդիմութիւն։ Անշուշտ հիմայ «ՄԻՈՒԹԻՒՆՆ» ալ իր քայլերուն նոր ուղղութիւն մը տալու վրայ պիտի մտածէ, արդի պահանջներուն համապատասխանելու ազնիւ դիտաւորութեամբ։

(Շարունակելի) Ե. Թորոսեան

ՕՍՄԱՆԵԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Խրախճանութիւնները կը շարունակուին սակաւ ինչ մեղմացած թափով. տարագիրները իրենց հայրենի հողին կարօտը պիտի առնեն քիչ ժամանակէն։ Բնիկ եգիպտացիները ուրախութիւն մը ունին թէ նորէն տունի և խանութի վարձքերը իրենց հին գները պիտի գտնեն, պիտի արժանանան։ Այս անգամ առանց միթինկներ դումարելու, առանց ստորագրութիւններ հաւաքելով մէկն ու միւսը անհանգիստ ընելու։

Կը տեսնէք թէ՝ մէկ մարդու մը բրած գիջումը, ի՞նչ հին՝ բայց խնամով պատրաստուած ծրագիրներ սարսաղ պուրնիին թափեց, և ի՞նչ խելապատակներ նորանոր յօգնութիւններ պիտի կրեն նոր ծրագիրներ և միտքեր հմայող նոր բանաձևեր ստեղծելու համար. որոշ չենք գիտեր թէ այս բոլոր իրարանցումներուն մէջ հայկական քաղաքականութիւնը ի՞նչ նոր փուլերու մէջ պիտի մտնէ։ Բայց եթէ Բրէնթանիա թատրոնին մէջ գումարուած մեծ հաւաքոյթին սկզբունքները ի նկատի ունենանք, ալ մենք նորանոր ջանքերու, նորանոր արիւնհեղութեանց պէտքը չպիտի ունենանք...։

Օսմ. Սահմանադրութիւնը մեզի սեփականելու համար լայն անլրպետ մը բացողը եղած է մեր կրօնքն ու Հայրենիքը։ Կրօնքի խնդիրը մասամբ լուծուած է... եղեր այդ հաւաքոյթին մէջ։ «Անկցի կրօնքը» պօռացողներ եղած են։ Ասլմնցաւ։ Կը մնայ Հայրենիքի խնդիրը. այդ ալ մեծ բան մը չէ։ Հոն ներկայ եղող հայ ներկայացուցիչները (?) առանց մեզի բան մը հարցնելու, կը համաձայնին իրենց հասկցած եղանակաւ...։

Օսմանեան Սահմանադրութեան հաստատումը իրականութիւն է ներկայի համար. և քանի որ համոզուած ուժերով պայքարողներ կան, տեւականութիւնն ալ կարելի է ապահովուած համարել ապագայի համար։

Այս ընդհանուր երևոյթն է։ Բայց Սահմանադրութիւնը մասնակի չարագործութիւններուն վրայ ալ ազդելով անոնց սանձարձակութիւնն ալ պիտի չափաւորէ՞։ Զոր օրինակ. ասկէ երկու տարի յետոյ եղբայրութիւնը, հաւասարութիւնը և ազատութիւնը ուռեցած կուրծքերով արտասանելու առեն, Շամիրամիս պառը նորէն... կրակ պիտի առնէ՞։ Հեռագրատան մէջ լիաբուռն վարձատրուած պաշտօնեան ղեղծարար պիտի ըլլա՞յ ու կծիկը պիտի գնէ՞. Եղիշէին տունը հայ գողեր պիտի մտնե՞ն... Առաջնորդարանը՝ իր բոլոր կարգ ու սարքերովը այդ գողութիւնները ծածկելու համար հնարամտութիւններու պիտի դիմէ՞։ Ասոնք այն տեսակ հարցեր

են, որոնց վճռական պատասխան մը չէ՛ կարելի տալ, քանի որ վերոյիշեալ անբարոյականութիւններուն բուն հեղինակները կան ու կը մնան . . .»

Այսօր թէև բոլոր հրապարակի մարդոց կարծիքները վերջնական համաձայնութեան մը յանգած չեն Օսմ. Սահմանադրութեան դործադրումի մասին, սակայն միշտ իրողութիւն կը մնայ սա՛ զարագան թէ Սուլթանը Օրմանեան սրբազանի դիմումներէն ճանձրացած, հայ և Թուրք յեղափոխականներու պատճառած սրտնեղութիւններէն խրտչած, իր վերջին օրերը քաղցրացնելու համոզումով կոտայ Սահմանադրութիւնը, վայրկեանապէս ուրախութեան ժպիտի փոխարկելով զրկեալներու աչքերուն մէջ լճացած ադի արցունքները . . .»

Սա՛ չափ լաւատեսութիւն Սուլթանի կողմէ եղած այս ակամայ՝ բայց կարևոր զոհողութեան համար. կը մնայ կարդադրել հին հաշիւները ալ. . . , բայց ատոր ձեռնարկելէ առաջ լսենք ուրիշներն ալ։

Ինչպէս ըսինք, տակաւին առարկողներ կան Սուլթանի այս արնօրինութեանց դէմ, այս յոռետեսներն ալ կարելի է իրաւունք ունին. զիրենք ալ լսենք։

Աթէնքի թերթերուն և ընդհանրութեան մէջ տիրող կարծիքը այն է թէ՝ Օսմ. Սահմանադրութիւնը յրջօրէն Թուրքիոյ մէջ դործադրուելու պահուն, պէտք է որ յոյն տարրը ջանքեր ընէ առաւելութիւններ ձեռք բերելու համար։

Մանասթիր յոյն ազդաբնակութիւնը Սահմանադրութեան վերահաստատումը ծափողջունած է մեծ միթինկի մը մէջ։

Սոֆիայէն միևնոյն համակրելից ցոյցերու ձայները կը հասնին։

Եւրոպական Մամուլը անտարբեր չէ Օսմ. Սահմանադրութեան վերահաստատումին նկատմամբ, և Սուլթանի անկեղծութեան մասին տարակարծիք եղողներ ալ կան։

Ս. Բէթերսպուրկէն Յուլիս 27 թուականաւ հեռագիր մը կը հաստատէ թէ Ռուս Մամուլը Օսմ. Սահմանադրութեան հաստատումը կը շնորհաւորէ։

Ռուս մամուլին մէկ մասը վախ կը յայտնէ թէ նոր ռէժիմը կացութիւնը պիտի ծանրացնէ, բայց Անգլիա և Ռուսիա պատրաստ են պատահականութեանց դիմագրաւելու համար։

Վիէննական Մամլոյն մեծագոյն մասը կը կարծէ թէ Սահմանադրութեան հաստատումը պարզ կատակերգութիւն մ՚է, պարզապէս բարեհորոդմանց համար եղած ջանքերը ջուրը ձգելու նպատակաւ հնարուած։

Հռոմի իտալական թերթերէն մէկ քանիները Սուլթանին անկեղծութեան վրայ տարակոյս կը յայտնեն։

Ֆրանսական թերթերը կըսեն թէ Պոլսոյ այս նորօրինակ շարժումներուն հետևանքը գուշակել անկարելի է. Թանձ կը կարծէ թէ Արևելեան խնդիրը այսպէսով փոփոխութիւններու պիտի ենթարկուի, իսկ Մակեդոնական հարցը պիտի երկարաձգուի։

Այս ամենուն մէջ եթէ մեզի համար մտածելու արժանի բան մը կայ, այն ալ սա՛ է թէ՝ մենք ինչ չափով պիտի կրնանք օգտուիլ այս փոփոխութիւններէն։ Ուրիշներու վայելած առաւելութիւններուն վրայ մենք ուրախանալու իրաւունքը չունինք, քանի որ անդին աչքէ հեռու և քայքայուած ու աւերակներու վերածուած Հայաստան մը ունինք, որուն վրայ մենք միայն կրնանք մտածել. օտարներուն հոգը չէ և հոգ ընելու ալ պատճառ մը չունին։ Ա՛յս է բուն հարցը որ մեր միտքերը պէտք է որ զբաղեցնէ ամեն վայրկեան։

ՇԱՄԱՆԴԱՂ

ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

ՀՈՎՈՒԵՐԳԱԿԱՆ

—o—

Արեւուն հետ երբ կը պլպլաս
Ցողերուդ աւերը կ՚իմանա՞ս.
Աչքերս ինձ շա՛տ բաներ կը պատմեն...
Դէ՛հ, կա՛ց, յոյզերս զիս թո՛ղ չ՚նեղեն։

Երբ սեւ աչքերդ լոյսով կը բացուին՝
Կըսեմ՝ «թեւերս զօսի մը ըլլային
Մէջիդ՝ ու շրջուինք լուցկի մը»
Հրդեհելու համար քու սիրտը։

Անոյշ երազներս երգերու պէս
Կը նուագին, ըլլային գոգցես
Երկա՛ր, մեղմիկ՝ մէկ մէ՛կ օրօրներ.
Որ կը հիւսեն իմ յուզուած օրեր։

Նեղոսի խաղաղ ալիքներեն
Նեղուած՝ ա՛յնքան կը խորշիմ որ՝ քէ՛ն
Կը պահէ արինքս անոր փոշոտ
Եզերքեն, ինչու որ՝ քեզ չէ՛ մօտ։

Գահիրէ Օ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՕՈՒՐՀԱՆԴԱԿ

Վերջին թղթաբերով ստացուած Կովկասեան հայ թերթերէն այնպէս կը հասկցուի թէ՝ Ռուս կառավարութիւնը մասնաւոր ուշադրութիւն դարձուցած է տեղւոյն Դրօշակեան կուսակցութեան դործունէութեան վրայ, որ ինչպէս կերևի Ռուսական կառավարութեան օրէնքներուն հետ ուղիղ չի համեմատիր։

«Մշակ»ի ներքին լուրերու բաժնին մէջ երևցած քանի մը հատուածներ ուշադրաւ պարագաներ են և շատ հաւանական է որ՝ «Դրօշակ»ի խմբագիրներէն Մ. Սարգիսեանի Միւնիխի մէջ ձերբակալումը պատճառ եղած ըլլայ այդ նոր հետապնդումներուն։ Այս վերջնոյն համար կըսուի թէ՝ անցեալ Յուլիսին կատարուած Ռուսական թղթադրամներու կարևոր գողութեան իրը մեղսակից ամբաստանուած է, և ձերբակալուած ատեն 300 հատ 500 ական ռուպլինոց նոյն թղթադրամներէն բռնուած են անոր վրայէն։ Դալով «Մշակ»ի դրածներուն։

— «Վտակ» օրաթերթի խմբագիր – Հրատարակիչ Պ. Խուդատեանը կալանաւորուեց Յունիսի 30 ին և աղատ արձակուեց միայն ա՛յն ժամանակ երբ վճարեց 1300 ռուբլի տուգանքը, որ Գեներալ Նահանգապետի կողմէ երկու անգամով դրուած էր «Վտակ»ի վրայ։ Իսկ անցեալ օր «Վտակ» թերթը Նահանգապետի կարդադրութեամբն դադարեցուած է բոլորովին։ Գրաւուած են նաև վերջին համարի բոլոր օրինակները և տպագրութեան տառերը։

— «Լրագիրները հաղորդում են, որ մի քանի ժամանակ առաջ Պիատիգորսկում կալանաւորուեց սմն Աւետեան, դաստրօնոմիական մասկէնի տէր, որին ձերբակալել են՝ կասկածելով իբրև յեղափոխական կազմակերպութիւններու մասնակից։ Խուզարկութեան ժամանակ նրա մօտ դտան շատ զէնք – մաուզէր, պարաբէլլում հրացաններ և 500 փամփուշտ։ Նրա հետ կալանաւորուեց և Շաբանեանը, որ աշխատում էր թագցնել զէնքը։»

Որչափ կը յիշենք՝ Հայ – Թաթարական ընդհարումներու ժամանակ հայերու քով դտնուած զէնքերը չէին զբաղեցներ կառավարութեան միտքը, իսկ հիմայ տարբեր վերաբերում մը կը նշմարուի առայդ։

Մամուլի աղատութիւն հռչակուելէն վերջ ալ, «Վտակ»ի վերոյիշեալ պայմաններուն մէջ փակուիլը իր մասնաւոր նշանակութիւնը պէտք է որ ունենայ։ Կամ ա՛յն է որ Մամլոյ աղատութիւնը որոշ սահմաններու մէջ է, կամ ա՛յն է որ մենք հայերս մեզի տրուած աղատութիւնը վայելել չենք դիտեր ու չարաչար կը գործածենք։ Վերջինը աւելի հաւանական է։

ԱԶԳ

Գաւառական Պատկ. Ընդհ. Ժողովոյ որոշմամբ, յառաջիկայ ԴԷՊՐՈՅԱԿԱՆ շրջանին, որ կսկսի Սեպտեմբեր 1 ին, Գալատեան Ազգ. Վարժարանի աշակերտներէն ամսաթոշակ պիտի պահանջուի, նախակրթարանի համար 40 եգ. ղրշ. եւ Մանկապարտէզի համար 20 ղրշ.

Միջակ կարողութեան տէր ընտանեաց պատկանող աշակերտք միայն կէս ամսաթոշակ պիտի վճարեն։

Իսկ ձրի պիտի ընդունուին այն տղաք որոնց ծնողքը Ազգ. Առաջնորդարանէն վաւերացեալ՝ կարօտութեան վկայագիր մը ներկայացնեն։

Ուստի այն ամեն ծնողք որ իրենց զաւակները Գալատեան Վարժարանը ղրկել կը փափաքին, Օգոստոս 25 էն սկսեալ ամեն օր միջօրէէն առաջ, թող հաճին իրենց զաւակաց հետ Վարժարան ներկայանալ, Սեպտեմբերի ամսաթոշակը վճարելով զաւակներնին արձանագրել տալու համար։

Իսկ կարօտութեան վկայագիր ստանալ փափաքողք թող այժմէն դիմեն Առաջնորդարան, վասնզի առանց սոյն վկայագիրը ի ձեռին ունենալու որ եւ է տղայ իբր ձրի չպիտի ընդունուի վարժարան։

Ամսաթոշակները կանխիկ վճարելի են, ուստի ամսոյն մինչեւ 8ը ամսաթոշակը չվճարող աշակերտը վարժարան չպիտի ընդունուի։

ԿՆԻՐ

Գահիրէ 28 Յուլիս 908

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Կը լսենք թէ՝ – թէեւ քիչ մը ուշ Ամերիկայի երկու տարիէ ի վեր «Նորընտիր» Առաջնորդ Եղնիկ Եպիսկոպոս Ապահունի մեկնած է դէպի իր պաշտօնատեղին։

Հաշիւ ըրինք որ, Նորին «Գերապատիւ անձնաւորութիւնը, «Արշալոյսի» թ 11) 24 Յունիս 496 – 24 րդ թերթին մէջ երեւցած «Հիասթափում» վերնագրով ցնցող յօդուածէն հիասթափած՝ ափալ թափալ մեկնելու վրայ մըտածեր է, եւ առանց սպասելու որ Ամերիկայէն նոր «ճանապարհածախս» ղրկուի, եւ «հիասթափում» յօդուածին չարունակութիւնը մտիկ ընէ, հոս Տիար Սարգիս Մաճարեանի աշակցութիւամբ կասկոդեր ու «մնաք բարով . . . . . .»։

Ամերիկայի հայերուն համար թերեւս բարեյաջող ըլլայ իրենց Առաջնորդին՝ յետ երկուց ամաց՝ մեկնումը ասի, սակայն «Արշալոյս»ին համար շատ վնասակար եղաւ, որովհետեւ Տ. Ե. Թրոսեան ժամանակ չ՚զտաւ պաշտօնապէս հարցնելու իրեն թէ՝ «Դեր. անձնաւորութեան» թոյլատրութեամբն «Արշալոյս»ի տպարանէն ԳՈՂՑՈՒԱԾ կարգ մը կարեւոր առարկաներու հետ՝ Եպիսկոպոսական գլխշէ մըն ալ իրեն հետ պիտի տանէ՞ր. . . ։

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ

«Ռազմիկ» կը գրէ.

«Սանասարեան վարժարանի ներքին վիճակի մասին կրկին աննպաստ լուրեր կը հասնին։ Վարժարանին տեսչութիւնը կազմողներն անհաշտ են իրարու մէջ եւ ուսանողութիւնն անհամաձայն է ուսուցիչներու եւ վարիչներու հետ։ Արտաքին ազդեցիկ ուժի մը ներկայութեան պէտքն զգալի կը թուի։»

Ծանօթ. – Հանգուցեալ Ղեւոնդ Եպիսկոպոս Շիշմանեան իր «Իմ Աքսորի Կեանքը» երկասիրութեան մէջ յատուկ տեղ տուած էր Սանասարեան վարժարանի կազմին եւ վարչային դրութեան մասին, եւ կը տեսնենք հիմայ թէ՝ անոր կանխատեսութիւնները իրականութեան կը վերածուին։ Իսկ՝ թէ կենդանի ըլլար նա եւ անձամբ հաստատէր իր նկատողութիւններուն ճշմարտութիւնը, որոնց համար ալ ինչպէս գիտենք՝ անօրինակ խոչտանգումներ կրեց զրպարտուելով մատնուելով, եւ վերջ ի վերջոյ աքսորի մէջ մահանալով . . . ։

ԴԷՊԻ ՊՕԼԻՍ

Գալատեան Վարժարանի ուսուցիչներէն հանրածանօթ հրապարակագիր Տիար Երուանդ Սրմաքէշխանլեան երկուշաբթի օրը ընտանեօք Աղէքսանդրիա մեկնեցաւ այսօրուան շոգենաւով Պոլիս երթալու համար։

ՆՇԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ամսոյս 2 ին կէս օրէն յետոյ ժամը 4 ին Շարէ Մուհամմէտ Ալիի պողոտայի վրայ գտնուող Էզոլ տը Տանս ի սրահին մէջ, նախագահութեամբ Սրժ. Տէր Յարութիւն Քհնյ. Յակոբեանի տեղի ունեցաւ նշանախօսութիւնը Պ. Աբգար Մ. Պէրպէրեանի ընդ Օրիորդ Ասանէթ Ն. Մսրլեանի։

ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Անցեալ երեքշաբթի 28 Յուլիս Քաղաքիս Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ տեղի ունեցաւ Մկրտութեան արարողութիւնը Տիար Յարութիւն Ըսքէնչեանի նորածին դստրիկին, կնքահայրութեամբ Տիար Յովհաննէս Բիւրիւմեանի։

Երախան Աղաւնի անուանուած է։ Մեր ջերմագին շնորհաւորութիւնները։

ՀԵՌԱԳԻՐ

—o—

Կ. Պոլիս 29 Յուլիս.–Օսմ. Սահմանադրութեան գործադրութիւնը ապահովելու համար, Սուլթանը Շէյխ–իւլ իսլամին ներկայութեանը Ղուրանին վրայ երդում ըրաւ։

Կ. Պոլիս 29 Յուլիս.–Ամբողջ քաղաքը ցնծութեան մէջ է։ Ազատական լրագիր, հայրենասիրական Պրոշիւրներ եւ թռուցիկ թերթեր վաճառողները լաւ գործ կընեն։ Ամենուրէք ճառախօսութիւններ տեղի կունենան։ Սուլթանին անձնական քարտուղար Իզզէթ բաշա՝ Սուրիա մեկնեցաւ. (աքսորուեցաւ)։ Ոստիկանութեան նախարարը սահմանադրականներուն պահանջման վրայ պաշտօնանկ եղաւ։ Մեծ եպարքոսը Բ. Դրան առջեւ խմբուած բազմութեան չափաւորութիւն քարոզեց։ Ըսաւ թէ Սուլթանը հիացած էր իրենց հայրենասիրութեան վրայ։

Երեսփ. Ժողովը Նոյեմ. 1 ին պիտի գումարուի։ Մասնաւոր Իրատէ մը կը պատուիրէ եւ կենալ նորանոր ցոյցերէ որոնք գործերուն ուղիղ ընթացքը կրնան խանգարել։

Կ. Պոլիս 30 Յուլիս.–Ժողովուրդը դժգոհութիւն կը յայտնէ՝ որ նախարարութեան մէջ ազատական տարրերու մուտքը կուշանայ։

Կ. Պոլիս 31 Յուլիս.– Հայոց Պատրիարք Ամեն. Օրմանեան իր հրաժարականը տուաւ իրեն դէմ կազմակերպուած ցոյցերուն հետեւանօք։ Զմիւռնիոյ Առաջնորդ Գեր. Դուրեան տեղապահ անուանուեցաւ։

Կ. Պոլիս 31 Յուլիս.–Պալատի պաշտօնատարներուն համար խոստացուած փոփոխութիւնը գործադրուիլ սկսաւ։

Ամբոխը փողոցներուն մէջ զանոնք «հի՛լեց»։ Ուրիշ պաշտօնատարներ ստանց իրենց ճամբուելուն սպասելու՝ փախուստ տուին։

Կ. Պոլիս 31 Յուլիս.–Սէլամլիգի ապարողութիւնը ամենամեծ չքեղութեամբ կատարուեցաւ. քառասուն հազար հոգիէ բաղկացած ամբոխը ծափողջունեց Սուլթանը։

Զրոյց կայ թէ Քեամիլ բաշայ պիտի յաջորդէ Սայիտ բաշային։

Կ. Պոլիս 31 Յուլիս Անհամար բազմութիւն մը ներկայ էր Սէլամլըքին։

Ն. Վեհափառութիւնը բաց կառքով գնաց դէպի աղօթատեղին։ Կարգապահութիւնը կատարեալ էր։

Աղօթքէն յետոյ Սուլթանը կայսերական Բէօշկին պատուհանը գալով ժողովուրդին ցոյց տուաւ ինքզինքը։ Յետոյ դիւանագիտական մարմնոյն ընդունելութիւնը տեղի ունեցաւ։ Իրրեւ ազգագրոյնը հիւպատոսներուն, Իտալական դեսպանը ճառախօսութիւն մը ըրաւ։ Սուլթանը մտերմօրէն բարեւեց օտար տէրութեանց բոլոր դեսպաններն ալ։ Գերմանիոյ դեսպանը աւելի իր մասնաւոր ուշադրութիւնը դրաւած էր, որովհետեւ այս վերջինը Կիյեսմ կայսրէն տեղեկութիւն կը բերէր թէ՝ «կայսր բարեւելէ յետոյ Վեհ. Սուլթանը՝ յոյս կը յայտնէ որ՝ այս նոր ուղին, որուն մէջ այնքան իմաստութեամբ մտած է Սուլթանը, ապահովապէս իր երկրին եւ թագաւորութեան երջանկաբեր թըւական մը պիտի բանայ։» Բաւական մտահոգութիւն կը պատճառէ սա՝ պարագան թէ՝ 950 ոճրագործներ ալ ազատ թողուած են քաղաքական դատապարտեալներու հետ։

Կ. Պոլիս 1 Օգոստոս. Կ'ըսուի թէ՝ Ն. Վեհափառութեան Սուլթանին առողջական վիճակը զոհացուցիչ չէ՝ նախ՝ իր առաջացած տարիքին եւ յետոյ՝ երկարամեայ միապետական յոգնութիւններուն պատճառաւ։ Նախարարները հեսարզհեսէ իրենց պաշտօնին մէջ անկախ դիրք մը գրաւելու վրայ են։

Կ. Պոլիս 1 Օգոստոս. Տակաւ առ տակաւ կը հաստատուի թէ՝ Սահմանադրութիւնը հռչակուելու չարժումներուն մէջ ամենէն աւելի ձեռնհասօրէն օժանդակող եղած է Անգլիան։

Անգլիոյ ներկայացուցիչները ժողովուրդեան կողմէ համակրալից եւ իանդավառ ցոյցերու առարկայ կըլլան։

Բարիզ 2 Օգոստոս. Թայմզ կը զեկուցանէ թէ՝ Սըր Ճոն Մէքվիլ Եգիպտոսի Անգլիական բանակներուն հրամանատար պիտի անուանուի։

Կ. Պոլիս 2 Օգոստոս. Բ. Դրան առջեւ հրովարտակ մը կարդացուած է որ Սահմանադրութեան հաստատումը պաշտօնապէս կը հաստատէ։

Այդ գրութեամբ կը չեշտուի թէ հին ռէժիմին բոլոր արտասովոր գործակերպերը ջնջուած են։

Կ. Պոլիս 2 Օգոստոս. Ապտիւլ Բահման բաշա Նախարարապետ անուանուեցաւ, իսկ Քիամիլ բաշայ անպաշտօն նախարար կը մնայ։ Նախկին նախարարներուն մեծ մասը փոխուեցաւ։ Երիտասարդ թուրքերը Իզզէթ բաշան տանող Անգլիական նաւուն վրայ արգելք դնելով Իզզէթը իրենց յանձնուիլը կը պահանջեն։

Կ. Պոլիս 3 Օգոստոս.– Խորհրդարանին գումարումը Նոյեմբեր 14 ին յետաձգուած է։

Իգտամ կ'ըսէ թէ՝ Անգլիոյ Դեսպանը մերժած է յանձնել Իզզէթ բաշան որ Անգլիական նաւ մը ապաստանած էր։

Սթօքհոլմ 4 Օգոստոս.– Գերմանիոյ Վեհապետները հոս հասան։ Անոնք Թագաւորին եւ Թագուհւոյն կողմէ ընդունուեցան։

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԼԷՎԱԻ ԴԱՏԸ

Անցեալ թիւին մէջ մէկ երկու տողով միայն կրցանք ծանուցանել Լէվաի Խմբագրապետ Ապտէլ Ազիզ Շաւիշի դատավարութիւնը, որ մինչեւ երեկոյ տեւեց, առանց տակաւին վերջանալու։

Ամբողջ օրը Ապտինի դատարանին առջեւ տեղացիներու բազմութիւն մը ցոյցեր կ'ընէր, գոռում գոչումով, ծափահարութիւններով եւ զանազան ձեւերով։

Երեկոյին ուշ ատեն երբ ամբաստանեալը դատարանէն դուրս ելաւ, հոն հաւաքուած բազմութիւնը շրջապատելով անոր կառքը՝ քաղաքիս գլխաւոր պողոտաներէն յաղթական գնացք մը սկսաւ։

Ցուցարարները զանազան տեղերու մէջ ՁԼասներ պատճառեցին ոչ–տեղացիներու, այնպէս որ ամբոխավարներու հրահանգները այլեւս անլսելի կը մնային։

Քանի մը կարեւոր Ձլասներ արձանագրած են արդէն տեղական թերթերը, որոց գլխաւորները Մատապէկ փողոցին մէջ տեղի ունեցած են։ Հեծելանիւի վաճառական մը, ուզելով միջամտել ոտքի տակ գնացած իտալացիի մը հասած վերկանքին դէմ, կատղած ամբոխը շատ մը վէրքեր պատճառելով պատասխանած է իր բողոքներուն։

Սպասենք դիտնալու համար թէ այսպիսի անկարգութիւններ ազդեցութիւն պիտի գործեն խմբագրապետին մնացորդ դատավարութեանը ատեն։

Դատավճիռը ամեն ինչ կրնայ պարզել։

* * *

Երէկ դարձեալ Ապտինի Դատարանին առջեւ խռնուիլ ուզեցամբոխը, բայց այս անգամ կանուխէն ոստիկանական զգուշութիւններ առնուեցան։ Այս անգամ Լէվաի Խմբագրապետ Ապտիւլ Ազիզ Շաւիշի դատավճիռը պիտի արձակուէր։

Խմբագրապետը դատապարտելի նկատուած էր, կը մնայ պատժոյ տեսակին վրայ համաձայնիլ։

Ապտէլ Ազիզի փաստաբանները մեղմացուցիչ պարագաներ յիշեցուցին դատաւորներուն եւ դատական ծախքերէն զատ 20 ոսկւոյ տուգանքով մը փակուեցաւ խնդիրը, որ թերեւս մեծ համեմատութիւններ առնէր։

ԿԱԽԱՂԱՆ

Նախորդ թուով տեղական թերթերէ առնելով ծանուցած էինք թէ՝ Պետրոս Հիւսնեան Շաբաթ օրը կախաղան պիտի բարձրանար կառավարչատան մէջ։

Հաւաստի աղբիւրներէ կը տեղեկանանք հիմայ թէ՝ այդ վճիռը գործադրուած չէ, և հաւանական է նոյն իսկ որ պատժոյն վրայ փոփոխութիւններ ալ տեղի ունենան, Օսմ. Սահմանադրութեան հաստատումէն օգտուելով։

ՍՏԱՅՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

—o—

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ

Քերթուածներու ֆրանսերէն թարգմանութիւնը POEMES։

Գնել փափաքողները հետեւեալ դրավաճառներուն պէտք է դիմեն, որոնք Mercure de Franceի ներկայացուցիչներ են։

Delbourgo	Le Caire
Dièmer	»
Nacamouli	Alexandris

ՍԵՂԱՆԱՒՈՐԱԿԱՆ ՏՈՒՆ

—o—

Մուսմի փողոց թիւ 6, Սինկրրի մատնաճիւղին մով. Ժիւսրէրի դիմաց.

Կը գնէ եւ կը ծախէ հրապարակի վրայ շրջաբերող բոլոր կարեւոր արժեթղթերը, մասնաւորաբար Քրէտի Ֆոնսիէի հին եւ նոր, Ռումէլիի երկաթուղեաց եւ Բանամայի ֆրանսական վաւերացնալ արժեթղթերը, որոնց սկզբէն ց'այսօր շահող թիւերուն ցուցակներն ալ ունի։

Արժեթղթերու արդի խիստ նպաստաւոր գներէն կրնան օգտուիլ Եգիպտաբնակ մեր ազգայինները մեզի դիմելով։

Մասնավճարներով – 25 50, 100– կարելի է արժեթղթերու տիրանալ, եւ մատչելի պայմաններով՝ աւանդի փոխարէն՝ փոխառութիւններ կնքել։

Սեղանաւորական ամեն տեսակ գործառնութեանց, եւ առեւտրական ամեն կարգի Պանքներ զեղչելու պատրաստակամութիւն։

Սեղանաւորական եւ Պորսայի գործառնութիւններ եւ ա՛յս կարգի գործերու վերաբերեալ գաւառներէն եղած յանձնարարութիւններ փութով կը կատարուին։

Ռումէլիի երկաթուղւոյ վիճակահանութեանց պանգ Օթոմանէն երաշխաւորեալ եւ վաւերացեալ բրօմեսներն գնել ուզողներուն համար՝ լաւ պատեհութիւն մ'է մեզի դիմելը, որովհետեւ պանգ Օթոմանէն ուղղակի կստանանք յիշեալ բրօմեսները։ 12–50

ԱՐՄԵՆԱԿ ԹԱՇՃԵԱՆ

ՕԹԷԼ ՏՐԱՊԻԶՈՆ

ԱԼԷՔՍԱՆԴՐԻԱ

Քանթօ, Սուգուլ Մանկաի Մանկաի Մզկիրին դէմը

3 Թիւ 3

Պանդոկապետ – Մ. Գէորգեան

—o—

Կը յանձնարարուի արդոյ հասարակութեան և իմասնաւորի մեր հայրենակիցներուն քաղաքին կեդրոնը գտնուող և օդաւէտ դիրքով սոյն պանդոկը, ուր յաճախողները պիտի գտնեն կատարեալ մաքրութիւն և փութական սպասարկութիւն։

Դիմեցէք անդամ մը և գոհ պիտի մնաք։

Գիները չափաւոր են։ 28–55

ԻՆՉԵՐԻ՞ ԸՆԴՈՒՆԱԿ ԵՆ

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՓՐԿԻՉՆԵՐԸ

ԹՈՒՆԱՒՈՐՄԱՆ ՄԻ ՀՐԷՇԱՑԻՆ ՓՈՐՁ

(Շար. 497–25. Թիւէն եւ վերջ)

Ոստիկանութիւնը ոճրի ուժգին տպաւորութեան տակ, եւ մանաւանդ ճնշուած Լօնդոնի բոլոր թերթերի բարձրացրած միահամուռ վայնասունից թէ «օտարներ» այդպէս չարաչար են գործածում անգլիական ջղերը, հրամայեց Բէհիամ բիւ ի բաժնին՝ ստուգել իր կասկածները մեզ նկատմամբ։

Եւ երեկոյեան, ժամը մօտ 8 ին, երբ մենք, բոլոր մնացած ընկերներս, կենդրոնում հաւաքուած, մտածում էինք մեր շարքերի կատաղութեան, զայրոյթի առաջն առնելու մասին, ահա ոստիկանապետը մի խումբ ոստիկաններով եկաւ մեզ մօտ։ Նա բոլորիս անունները գրեց, ապա մեր բնակարանների հասցէն առաւ, եւ յետոյ մանրամասն հարցերով կարծես ձգտում էր ո՞ւ է կապ գտնել մեր եւ կատարուած ոճիրների մէջ։

Այդ հարցաքննութիւնից յետոյ մեզ յայտնեց, որ ցանկանում էին խուզարկել մեր կենտրոնը, ուստի մենք պիտի բարէհաճէինք թողնել հեռանալ մեր տները։ Ոստիկանները կենտրոնի վերի յարկում գտնուած բոլոր թղթերը փոխադրեցին միջին յարկը։ Մինչ այդ՝ միջին յարկի վառարանի բոցերի մէջ վառում, մոխիր էին դառնում Պատգամաւորական ժողովի մի քանի արձանագրութիւնները, որ չօշափում էին Մխо–Զիթճեանի ոպանութեան պարագաները, ինչպէս Սազոնու գրպանից հանուած մօտ 40 հատ նամակները, դարձեալ վերոյիշեալների ոպանութեան մասին, որ գրուած էին Ամերիկայից։

Գիշերուայ ժամը մօտ 10 ին, Պ. Էկնարդը մեզ յայտնեց, որ բոլորս կարող ենք գնալ մեր տները։

Մենք առարկեցինք այդ կարգադրութեան դէմ, բայց այնու ամենայնիւ ո՞ւ է կասկածի տեղիք չտալու համար ամբողջ կենտրոնը յանձնեցինք ոստիկանութեան ու մի մի փոլիսմէնի հետ ցրուեցինք մեր տները։

Կորցնել մի ակնթարթում երկու ջիւան ընկերներ եւ յետոյ էլ կասկածուել խստաւոր եղեռնագործութեան մէջ։՝։

Յաջորդ առաւօտ չտասնեցի կենտրոն, Դոան մէջ նստել էր մի ոստիկան բարեւեցի, ներս մտայ։ Դահլիճի մէջ տեղում նոյնպէս նստած էր ոստիկաններից մէկը՝ որ տեսնելով ինձ վեր կացաւ եւ ամենայն քաղաքավարութեամբ բարեւեց։

Իրար հետեւից հասան մեր միւս ընկերները։

Նկատեցինք որ ոչ մի ձեռք չէր

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԽԱԽՈՏԻ

ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ – ԷԼ – ՊՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕԶՊԷՔԻՅԷ

ՍԵՓԱԿԱՆԱՏԷՐՔ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂԲԱՐՔ

ՑԱՏԿԱՆԻՇԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է։

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի աժան գներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատունը։

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկառներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չ'կայ հոս ու հոն ժամավաճառ ըլլալու. բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին։

Պարսկական ամենաընտիր թէմպէքիի այլ և այլ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գտնելը պարզապէս սխալիլ է։

Մեր վաճառատունը վերջապէս, գիներու աժանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մանաւանդ գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անժխտելի ապացոյցներէն մին ալ զարդացած եւրոպացիներէ օրըստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են։

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂԲԱՐՔ

դպել ոչ մեր թղթերին եւ ոչ էլ ո եւ է բանի, ամեն ինչ իր տեղին ու կարգին էր։ Բայց ինչո՞ւ ոստիկանութիւնը երեկոյեան դուրս էր քշել մեզ կենտրոնից, ինչո՞ւ տիրելուց յետոյ մեր կենտրոնին, ոչ մի բանի ձեռք չէր տուել։

Ոստիկաններ մեր բոլոր հարցերին միայն ժպիտով էին պատասխանում եւ կամ անզգաղար։

— Օ՛. այո՛. պարոն, կարծում եմ այդպէս է։

Երկար չտեւեց այս դրութիւնը. հազիւ անց էր կացել 10 — 15 րոպէ. ահա մտաւ Պ. Էդուարդը։

Բարեւեցինք։ Նա խսկոյն արձակեց երկու փոլիսներին, եկաւ նստեց մեզ մօտ ու ասաց։

— Պարոններ՝ շնորհաւորում եմ ձեզ. այս ամբողջ գիշեր Լօնդոնի կենտրոնական ոստիկանատունը զբաղուեցին այն հարցով, թէ պէ՞տք էր խուզարկել ձեր կենտրոնը. արդեօք յիրաւի ոստիկանութիւնը ո եւ է հիմունք ունի՞ կասկածելու ձեզ վրայ... Եւ լսելով ձեր մասին տրուած զանազան զեկուցումները՝ գտան, որ բոլոր կասկածները անհիմն են եւ ուրեմն վճռուեց ոչ միայն դադարեցնել սկսած խուզարկութիւնը, այլ ամեն միջոց գործ դնել, գոնէ այսուհետեւ ձեր կեանքը ազատ պահելու համար փորձանքներից։

Անցաւ ամբողջ մի շաբաթ։ Թերթերը անվերջ տպագրելով մեր թշուառ ընկերների նկարները, առասպելներ է, որ պատմում էին նրանց մասին։

Վերջապէս Նոյեմբերի 12ին, (Ն. տ.) ժամի 2ին տեղի ունեցաւ երկու զոհերի յուղարկաւորութեան հանդէսը։

Եղեռնագործին թաղել էին առանց արարողութեան, սուս ու փուս ոչ ոք չէր հետեւել նրա դագաղին։

Առաւօտեան վաղ բազմահազար ամբոխը ալեկոծւում էր Բէքհամի փողոցներում։ Ջիւաղ ու հետեւակ հարիւրաւոր ոստիկանները անկարող էին լինում կարգ պահպանել։

Ժամի 10ին ոստիկանութիւնը մեզ մօտ մարդ ուղարկեց ու խնդրեց, որ արարողութիւնը 2ի, 11 ին կատարի, որովհետեւ ժամը 2ին ուղղակի անհնար պիտի լինէր հետզհետէ հաւաքւող ամբոխին կարգի մէջ պահել. եւ երկրորդ դերեզմանատան տէրերը, Սագունու թաղման օրից փորձելով չէին համաձայնում տեղ տալ մեր նշնջեցեալներին երկնչելով որ իրանց գեղեցիկ գերեզմանատունը ոտնակոխ լինի։

Մենք ստիպուեցինք համակերպել եւ ժամի 11ին, հակառակ նախապէս կատարած յայտարարութեան, երկու դագաղները դուրս բերուեցին հիւանդանոցից ու տասնեակ հազարաւոր սգաւորների եւ հետաքրքիրների ուղեկցութեամբ տարուեցին Ֆorեստ Հիլի գերեզմանատուն, ուր Սագունու կողքին փորուած էին երկու փոսեր։

Այս անգամ հայ քահանան չէր կարողացել գալ, ուստի ծիսական արարողութիւնը կատարեց անգլիացի երէցը։

Անգլիերէն ու հայերէն դամբանական ճառերից յետոյ՝ հողին յանձնեցինք կուսակցական բարբարոսութեան այդ երկու նոր զոհերն էլ...։

ՊԱՏԴԱՄԱԻՈՐՆԵՐԻՑ ՄԷԿԸ ՎԵՐՋ

Մանօր.— Հայ թերթերէ արտագրուած։

ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲ

Առաջնորդարանէն վաւերացեալ կանոնագիրը տեսնուած է։

ԽՄԲ.

Ա. ՋԴ.

—o—

Ի դիտութեան Գահիրէաբնակ ազգայնոց կը տեղեկացնեմք որ տեղւոյս Թատերասէրներու կողմանէ կազմուած է Թատերախումբ մը Ազգային «Բաֆֆի» Թատերախումբ անուամբ, որուն կանոնագիրը Ազգային Քաղաքական Վարչութեան կողմանէ վաւերացուեցաւ։

Նպատակն է։ 1. Սատարել բարեպատակ հասատատութեանց։ 2. Օգնել հայրենիքի այլ եւ այլ արկածելոց։ 3. Տեղւոյս Ազգ. Գալստեան վարժարանի աղքատ սանուց սնունդ եւ զգեստ հայթայթել։ 4. Գալստեան վարժարանի յառաջադէմ աշակերտները զրկել եւրոպական եւ կամ կառավարական դպրոցները (Եգիպտոսի մէջ)։

Վերոյիշեալ նպատակներու իրագործման համար Թատերախումբը հետեւեալ Թատերգութիւնները փորձի դրած է։ 1. Ս. Դոմինիկ կղզւոյն գերին, Թագի համար, արցունքի հովիտ (Ահարոնեանի), Արտաշէս աշխարհակալ (Պ. Դուրեանի) Սանդուխտ կոյս (Թէրզիեանի) Ցուլիոս կեսար (Վոլթէրի), Արշաւանք Պարսից ի հայս կամ Անիի աւերումները (*)(Պ. Դուրեանի, Խաղամոլ (Տիրոեանի) Աւազակներ (Շիլէրի) Ուսկոկներ կամ Թուրք Գերման պատերազմ եւ տասն ծիծաղաշարժ կատակերգութիւններ։

Անդրանիկ ներկայացումն է Օգոստոս 15 ին որ պիտի խաղացուի «Ս. Դոմինիկ կղզւոյն գերին» եւ «Երից քաջեր» կատակերգութիւնը։ Ի նպաստ նպատակի 3 րորդ կէսի իրագործման։

Մանօր.— Խումբը կը պատրաստէ նաեւ հանդէսներ ի պահանջեալ հարկին։

Ազգային «Բաֆֆի» Թատերախմբի

Երկրորդ. Բեմյարդար

ԱՐԱՄ ԱՐԱՄՕՖ

(*) Մանօր. — Սոյն Թատերգութեան ձեռագիրը Տ. Ե. Թորոսեան պիտի տրամադրէ։

ՍԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՑՏԼԻՆԿԷՐ

Պալաքի փողոց. Խաղնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ դիմաց, Գաֆէ Տը Լա Պուրսի կից

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՄՆԱՃԻՒՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԷՐՆԵՐՆ են եւ ասոնցմէ մինչեւ ցարդ 17,000,000 ծախուած է։

400 է աւելի վկայական եւ մեծայղներով վարձատրուած, Երաշխաւորեալ մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՑԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ստացած է։

ՀԱՑԹԱՑԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ — ՀԱՑԹԱՑԹԻՉ ԱՆԳԼԻՈՑ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ

ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ — ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ

ՀԱՑԹԱՑԹԻՉ Ն. Բ. ԽՏԻՎԱՆԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԸՐԻ յատկանշին

ԴԻՆ ՁԱՓԱԻՈՐ



Զրի դասեր և նորոգութիւններ, ՍԻՆԿԸՐ մեքենայից համար, յաճախորդատուներուն մէջ։

Վճարման դիւրութիւն

Փոխանակութիւն հիներու եւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ՍԱՐԳԻՍ Յ. ԹԱՇՃԵԱՆ

Նորագիւղ կարի մեքենաներու, փօնօկրաֆներու եւ կազի վառարաններու։

Տասներկու տարիներ «Սինկըր» Ընկերութեան քով մեքենայարդարութեան զբաղելէ յետոյ, այժմ զինուաճառ Զախարիա Դոնստանթինուի քով պաշտօնեայ է զէնքերու եւ մեքենայարդարման ճիւղին մէջ։

Կարգ մը բարեկամ յաճախորդներու խնդրանաց վրայ, պաշտօնէն դուրս ունեցած իր պարապոյ ժամերը պիտի արամադրէ կարի մեքենաներու, փօնօկրաֆներու, կազի վառարաններու, նորոգութեանց եւ յարդարման։

Առ այժմ իրեն պէտք ունեցողները փոխանակ հոս ու հոն թափառելու՝ կրնան դիմել իր տունը Պապը – Շէհրիէի կողմը Շարա Պէղդալա՝ կրնան հարցնել նաեւ Մեծ Սրճարան Հայկականի Տնօրէններուն, եւ դարձեալ դիւրութեան համար քարթ բոստալով մը կրնան դիմել «Արշալոյսի» Տպարանին. նշանակելով իրենց հասցէն, Փողոցին անունը եւ Տունին թիւը։

Իր նորոգութեանց վարձքը պիտի ստանայ իրեն յանձնուած աշխատութիւնները լրանալէ եւ փորձեր կատարուելէ յետոյ։

Կարի նոր մեքենաներ ալ կը վաճառէ։ 19 — 50

ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

ՇԱՐԷ ՄՈՒՀԱՄԷՏ ԱԼԻ, ՊԱՊ-ԷԼ-ԽԱԼԷ

Շարէ Մուհամէտ Ալիի ամբողջ դէզին վրայ եղող նպարավաճառներուն մէջ, մեր վաճառատեղին միակն է որ ապրանքներու թարմութեան եւ մաքրութեան չնորհիւ մնայուն դիրք մը բռնած է տարիներէ ի վեր։

Նպարեղէններու վերաբերեալ ամէն ինչ՝ փոքր թէ մեծ քանակութեամբ գնողներու համար, անթերի են սոյն վաճառատեղւոյն մէջ։

Մեր յաճախորդները գոհ թողելու նպատակաւ՝ սպառելի ապրանքներու ընտրութեան եւ գնումին ատեն շատ խնամք եւ նոյն իսկ բծախնդրութիւն կընենք։ Ուրեմն նպարեղէնի վերաբերեալ ամէն ապրանք թարմ է եւ մաքուր մեր քով։

Կշիռը, որուն համար ուրիշ շատ տեղեր գանգատանաց պատճառ տուած է, մեր քով գոհունակութիւն միայն տուած է. վկայ մեր բազմաթիւ յաճախորդները, որոնք միշտ գոհ մնացած են։

Ձեր տունին նպարէղէնի բոլոր պէտքերուն համար դիմեցէք ի Պապ-էլ-Խալք՝ մեր վաճառատեղին եւ չ'պիտի զղջաք։ 16-41

ԿԱՐԱՊԵՏ ԳԱՍԱՐՃԵԱՆ